

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ, Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին (X - XIV դդ.), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2002, 136 էջ:

Մենագրության մեջ քննության են առնվում X դ. վերջից XIV դ. կեսն ընկած ժամանակաշրջանի միջնադարյան Հայաստանի քաղաքական, կրոնական, մշակութային ու տնտեսական կենտրոն Անիի եկեղեցիներին ու վանքերին տարբեր անձանց կողմից նվիրաբերված արժեքները:

Գրախոսվող աշխատությունը շատ ավելի ընդարձակ ու խորն է, քան կարելի է պատկերացնել խորագրից: Հարկ է նշել, որ այս թեմայով աշխատություն Հայագիտության մեջ գրվում է առաջին անգամ:

Անիի եկեղեցիներին ու վանքերին կատարված նվիրատվությունների լուսաբանության մեջ հասնում են մեր պատկերացումները ոչ միայն Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքի, այլև ընդհանրապես X-XIV դդ. Հայաստանի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի և հատկապես աշխարհիկ ու եկեղեցական ավատատիրության, վերջիններիս փախադարձ կապերի, փոխլրացման ու փոխազդեցության մասին:

Խնդրո առարկա նյութի քննության հիմնական սկզբնաղբյուրները վիմագիր հիշատակարաններն են, որոնք միանգամայն ճշգրիտ ու անկողմնակալ, համակողմանի ներկայացնում են իրողությունները, պատմական, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, այս կամ այն գործչի դիրքը, պաշտոնն ու աստիճանը: Հեղինակը լայնորեն օգտագործել է Ներսես Սարգիսյանի, Ղևոնդ Ալիշանի, Կարապետ Կոստանյանցի, Հովսեփ Օրբելու, Կարապետ Բասմաջյանի և այլոց հրատարակած վիմագիր արձանագրությունների ժողովածուները, ինչպես նաև գրանցում տեղ չգտած և հետագայում հրատարակված արձանագրությունները:

Գ. Գրիգորյանը հանգամանորեն ուսումնասիրել է նաև միջնադարյան Հայ մատենագիրների երկերը և այդ երկու հիմնական նյութական մշակույթի և պատմական աղբյուրների խորագնին հետազոտությունը հանգեցրել է դրական արդյունքի:

Առաջագիր չափազանց բարդ ու դժվարին խնդիրը լուծելու համար հեղինակը հարկադրված է եղել ոչ միայն մանրակրկիտ ուսումնասիրել տվյալ պատմաշրջանի գրավոր ու նյութական սկզբնաղբյուրները, այլև դրանց վերաբերյալ վերջին հարյուրամյակում ստեղծված պատմագիտական, հնագիտական, վիմագրագիտական, դրամագիտական ու լեզվաբանական հարուստ գրականությունն ու դրանց համեմատական վերլուծության ճանապարհով երևան հանել հարցեր, որոնք արդիական հնչողություն ունեն Հայագիտության համար:

Այս աշխատությունը առաջաբանի և հետևությունների հետ միասին բաղկացած է տասնմեկ ենթահատվածներից, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է եկեղեցական-տնտեսական բնույթի որևէ եզրույթի կամ հարցի սոցիալ-պատմական բովանդակության քննությանն ու ոչ Հայտնի կողմերի բացահայտմանը: Այս բոլոր ենթամասերն իրենց միասնական ուղղվածությամբ մեկ ամբողջություն են կազմում և ամենակարևորը գալիս են հավաստելու, թե Անիի նման շահաստանում որքան մեծ է եղել Հայոց եկեղեցու դերը:

Առաջաբանում կարևորվում են Անիի տեղն ու դերը X-XIV դդ. Հայաստանի քաղաքական, մշակութային, կրոնական ու տնտեսական կյանքի ոլորտում: Առանձնապես շեշտվում է Անիի հոգևոր հաստատությունների տնտեսության հետազոտության կարևորությունը: Հեղինակը ցույց է տալիս, որ իր ուսումնա-

սիրությունը կոնկրետ աշխատանք է, որի մեջ անխտիր քննության են առնվում Անիի եկեղեցիների ու վանքերի նվիրատվությունների մասին մեզ հասած բոլոր տվյալները, առանձին դեպքերում՝ նաև կողմնակի փաստեր, մի հանգամանք, որով հնարավոր է դառնում հետևելու նվիրատվությունների շարժընթացին, պարզելու որոշակի փուլում կայքերի տեսակների գերակշռությունը, դրանցով աչքի ընկած հոգևոր հաստատությունները, կալվածքների կառուցվածքը, նշանակությունը, եկամտաբերությունը, գները, առանձնահատկությունները, կայքերի նկատմամբ իրավունքի հիմնական ձևերը, նվիրատուների սոցիալական կազմը և այլ հարցեր:

Քննության են առնվում նաև պատմական սկզբնաղբյուրները, հատկապես վիմագիր արձանագրությունների ժողովածուները, արժևորվում անխաղտության ասպարեզում Նիկողայոս Մառի կազմակերպած արշավախմբերի կարևորությունը, ցույց է տրվում նախորդ հետազոտողների ներդրումը:

Հեղինակն Անիի հոգևոր հաստատություններին նվիրաբերված արժեքները բաժանում է երկու՝ շարժական ու անշարժ կարգերի: Առաջիններից կուղպակկրպակները առևտրի ու արհեստագործության կենտրոններ են եղել, որոնք գտնվել են իրենց նշանակությանը համապատասխան տեղերում ու կրել դրանց անունները, իսկ մյուսները հայտնի են նրանց անուններով, ում են պատկանել: Այնուհետև թարգմանական ու ազգային ինքնուրույն գրական հուշարձաններից բերված մի շարք օրինակներով վերհանվում են կրպակ եզրույթի ու դրան իմաստով մոտ որոշ բառերի ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

Կրպակների նվիրատվությունների ժամակազրույթյան ուսումնասիրությամբ հեղինակը պարզում է դրանց քանակական տատանումները՝ XI դ․ վերելքը, XII դ․ իսպառ բացակայությունը և վերստին աճը:

Ուսումնասիրության մեջ բացահայտվում են Անիի եկեղեցիների ու վանքերի անշարժ գույքի մյուս տարատեսակների՝ տների, հողային տիրույթների և գյուղերի բնորոշ առանձնահատկությունները, բացահայտվում քաղաքի տների տիպերը, դրանց կիրառական նշանակությունը, մշակովի ու անմշակ հողերի տեսակները: Վիմագիր տվյալներով քաղաքի հոգևոր հաստատություններից միայն երկուսը՝ Զաքարե Զաքարյանի անունով հայտնի վանքն ու Ս. Գրիգոր /Տիգրան Հոնենց/ եկեղեցին են գյուղերի սեփականատեր դարձել: Այլ կերպ ասած՝ փաստորեն Անիի եկեղեցիներն ու վանքերը, բացի երկուսից, գեթ ըստ վիմագիր արձանագրությունների, խոշոր ավատական տիրույթներ չեն ունեցել: Դրանից բացի, հիշյալ տիրույթները մեկ միասնական համալիրներ չեն կազմել, այլ միմյանցից անջատ, հիմնականում Այրարատ նահանգում սփռված մեկուսի կալվածքներ են եղել:

Գ. Գրիգորյանի ուշադրությունից չեն վրիպել նաև քաղաքի հոգևոր հաստատությունների օգտին կատարված շինարարական-նորոգչական աշխատանքները, որոնք իրենց հերթին յուրատեսակ նվիրատվություններ էին:

Հետաքրքրությամբ են ընթերցվում ժամանակաշրջանի դրամական համակարգերին, կայքերի գներին ու եկամտաբերությանը վերաբերող էջերը: Աշխատության այս հատվածում հիմք ընդունելով Հայ պատմատնտեսագիտական մտքի նվաճումները, մասնավորապես Թ. Ավդալբեգյանի կողմից Հայտնաբերած պատարագների 20-25 դահեկան միջին գինը՝ նա պարզում է այդ տիրույթների գները, ըստ դրանց նվիրատվության դիմաց ստացած արարողությունների:

Անիի կրպակների, դրանց վարձակալության գները համադրելով Մերձավոր արևելքի համանման ձեռնարկությունների հետ՝ հեղինակը դրանցում տեսնում է ակնբախ ընդհանրություններ, նմանություններ:

Աշխատության հաջորդ հատվածում հեղինակը կազմել և ներկայացրել է Անիի եկեղեցիների ու վանքերի հիսուն նվիրատուների ցանկը՝ նրանց գործունեության ոլորտի վերաբերյալ ըստ հնարավորին ընդարձակ տեղեկություններով: Այս ցանկից պարզվում է, որ Անիի եկեղեցիների ու վանքերի նվիրատուները եղել են

Հասարակական ամենատարբեր շերտերի ներկայացուցիչներ՝ թագավորական կամ իշխանական տան անգամներ, ռազմավարչական ավագանու ներկայացուցիչներ, կալվածատերեր, առևտրականներ ու վաճառուներ, հոգևորականներ և տարբեր մասնագիտություն ունեցող անձինք:

Գրքի վերջընթեր էջերում ամփոփված են հեղինակի համառոտ եզրահանգումները: Աշխատությունը գերծ չէ նաև թերություններից: Օրինակ՝ Առաջաբանից հետո անցումը ուսումնասիրության այլ ենթահատվածներին շատ կտրուկ է արված, առանց նախապատրաստության: Առկա են նաև մի քանի վրիպակներ:

Գ. Գրիգորյանի «Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին» ուսումնասիրությունը հեղինակի տեական պրպտումների տքնաջան ու Հանգամանալից աշխատանքի արգասիք է: Այն մնայուն և լուրջ, գիտական հետազոտություն է, որն առատ լույս է սփռում X-XIV դդ. Անիի սոցիալ-տնտեսական կյանքի իրողությունների վրա և կարևոր ներդրում է հայագիտության անդաստանում:

Ռ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Հ. Հ. ԿԱՐԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու